ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

2001 Հայաստանի Հանրապետություն,
Վանաձոր Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2001, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
Fax (ֆաքս) (374 322) 4 12 36
E-mail: hcav@hcav.am

Ե/2016- 13.01/27
13.01.2016 թ.

ՀՀ գլխավոր դատախազ
Գևորգ Կոստանյանին

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ

2016թ. հունվարի 11-ին www.hraparak.am[1] կայքէջում հրապարակվել է «Էջմիածնի նախկին քաղաքապետը հաստատում է գեներալ Մանվելի հետ ունեցած միջադեպը» վերնագրով նյութը: Վկայակոչված նյութում լրատվական միջոցը նշում է. «Ազգայի ժողովի պատգամավոր, գեներալ Մանվել Գրիգորյանի մարդկանց կողմից դեկտեմբերի 29-ին ծեծի ենթարկված ՀՀ կառավարության աշխատակազմի նախկին կառավարիչ, Էջմիածնի նախկին քաղաքապետ Հրաչիկ Աբգարյանը hraparak.am-ի հետ զրույցում ըստ էության հաստատեց, որ նման միջադեպ է տեղի ունեցել: Ձեզ ծեծի՞ են ենթարկել գեներալ Գրիգորյանի մարդիկ, մեր հարցին Աբգարյանը պատասխանեց. «Ես նման գեներալ չեմ ճանաչում»: Իսկ միջադեպի մասին ի՞նչ կասեք. «Չեմ հիշում նման բան»: Աբգարյանի հետ գեներալի մարդիկ հաշվեհարդար են տեսել միայն այն պատճառով, որ նա իր ավտոմեքեան «սխալ» տեղ է կայանել. «Ծեծկռտուք չի եղել»: Միակողմանի՞ են ծեծել, թե՞ քաշքշել են. «Դե հա, էլի», խոստովանել է Աբգարյանը»:

2016թ. հունվարի 12-ին www.tert.am[2] լրատվական կայքէջում հրապարակվել է «Գեներալ Մանվելը դաժան ծեծի է ենթարկել Էջմիածնի նախկին քաղաքապետին» վերնագրով նյութը:

Վկայակոչված նյութում լրատվական միջոցը նշում է. «Գաղտնիք չէ, որ Էջմիածին քաղաքը իր սեփականությունը համարող ԵԿՄ նախագահ Մանվել Գրիգորյանը սովորություն ունի չհանդուրժել այն անձանց, ովքեր ըստ իրեն խախտում են իր իսկ կողմից գրված կանոնները՝ թեկուզ մեքենա կայանելով իր համար անցանկալի հատվածում: «ՉԻ» տեղեկություններով՝ Ամանորի նախօրնին հերթական սկանդալային միջադեպն է տեղի ունեցել Էջմիածնում՝ Աժ գեներալ պատգամավորի անմիջական մասնակցությամբ:

1 http://www.hraparak.am/?p=99141&l=am/ejmiacni+naxkin+qaxaqapety+hastatum+e+general+manveli+hetvo%D6%82necac+mijadepy
2. Տես՝ http://www.tert.am/am/news/2016/01/12/chi/1895442

Էջմիածինցիները ականատես են եղել, թե ինչպես է գեներալը ծեծի ենթարկում այս անգամ Էջմիածնի նախկին քաղաքապետ Հրաչիկ Աբգարյանին, որը «Ջիփ» մակնիշի ավտոմեքենան կայանել է Էջմիածնի սուպերմարկետներից մեկի մոտ, և դա էլ պատճառ է հանդիսացել որ գեներալ Մանվելի թիկնապահները իջեցնեն մեքենայի անվադողերը՝ իմանալով հանդերձ, որ բռնցքամարտիկ Հրաչիկ Աբգարյանը չի հանդուրժի իր հանդեպ կատարվածը և իրենց հաշիվները տեղում «կմաքրի»: Սկսվում է ծեծկռտուքը, որին խառնվում է նաև իր մեքենայի մեջ սպասող գեներալ Գրիգորյանը: Աբգարյանի կնոջ ու հարսի աչքի առաջ գեներալն իր շքախմբով դաժան ծեծի է ենթարկում Աբգարյանին, իսկ ուժասպառ անելուց հետո ոտքերով հարվածներ տեղում նրա մարմնի տարբեր հատվածներին: Գեներալի բիրտ գործողություններին չէր խանգարել անգամ այն փաստը, որ Հրաչիկ Աբգարյանը բոլորովին վերջերս կորցրել էր որդուն»,–գրում է թերթը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով վկայակոչված նյութերում նկարագրված դեպքը՝ ՀՀ ազգային ժողովի պատգամավոր, ԵԿՄ նախագահ Մանվել Գրիգորյանի և նրա անվտանգության աշխատակիցների մասնակցությամբ իրենց բովանդակությամբ պարունակում են հանցագործությունների վերաբերյալ տեղեկություններ, դիմում եմ Ձեզ, քրեական գործ հարուցելու, հանցագործություն կատարած անձանց պատասխանատվության ենթարկելու պահանջով:

Հարգանքով
կազմակերպության նախագահ՝ Արթուր Սաքունց

Կատարող՝ Ա. Ձալյան

13:12 - 11 / Հունվար / 2016

Էջմիածնի նախկին քաղաքապետը հաստատում է գեներալ Մանվելի հետ ունեցած միջադեպը

Առաջարկված Կիսվել 2,2 հզր.

Tweet



Ազգային ժողովի պատգամավոր, գեներալ Մանվել Գրիգորյանի մարդկանց կողմից դեկտեմբերի 29-ին ծեծի ենթարկված ՀՀ կառավարության աշխատակազմի նախկին կառավարիչ, Էջմիածնի նախկին քաղաքապետ Հրաչիկ Աբգարյանը Hraparak.am-ի հետ զրույցում ըստ էության հաստատեց, որ նման միջադեպ է տեղի ունեցել: Ձեզ ծեծի՞ են ենթարկել գեներալ Գրիգորյանի մարդիկ, մեր հարցին Աբգարյանը պատասխանեց.«Ես նման գեներալ չեմ ճանաչում»: Իսկ միջադեպի մասին ի՞նչ կասեք. «Չեմ հիշում նման բան»: Աբգարյանի հետ գեներալի մարդիկ հաշվեհարդար են տեսել միայն այն պատճառով, որ նա իր ավտոմեքենան «սխալ» տեղ է կայանել.«Ծեծկռտուք չի

եղել»: Միակողմանի՞ են ծեծել, թե՞ քաշքշել են.«Դե հա, էլի», խոստովանել է Աբգարյանը:

Հիշեցնենք, որ մենք գրել էինք, որ Էջմիածնում արդեն ավանդույթ է դարձել, որ գեներալի մարդիկ են որոշում, թե որտեղ կարող են ավտոմեքենաներ կայանել եւ «սխալ» տեղում կայանված մեքենաների անվադողերը ծակում են:

Դիտվել է **3376** անգամ

Կիսվել 127

2 մեկնաբանություն

Տեսակավորել ըստ Ամենահին

Մեկնաբանություն ավելացնել...

Hakob Margaryan ·
Ереван

Երկրի խան նարիմանովի կողմից նշանակված , այդ երկու՝ սեյրան սարոյան, մանվել գրիգորյան, դեռ վազգեն սարգսյանի ու լտպ -ի կողմից արհեստական շինված, այլասեռված (degenerate) "գեներալները" էջմիածնի տարածաշրջանի ամեն բնագավառն իրենց գողական մանկլավիկների հսկողության տակ են վերցրել: Որտեղ էլ հիմնականում անտեսված են օրենքն ու օրինականությունը ու առաջնորդվում են վերջիներիս հրահանգ - քմահաճույքներով ... Խեռժական ստիկանական խունտայի կողմից ահ ու սարսափի տակ են պահում Հայաստան երկրի բոլոր գավառների բնակիչներին , որտեղ ինչպես էջմիածնում, ներդրված են զոռբայական նմանատիպ կրիմինալ վերահսկիչներ... Անզեն ու անպաշտպան վախի տակ ապրող ժողովուրդը, հատկապես, որ նրանց միջից հանված է վաղուց պայքարելու, արդարություն պահանջելու ձգտումն ու արժանապատվությունը , նման

«Չորրորդ իշխանություն». Գեներալ Մանվելը դաժան ծեծի է ենթարկել Էջմիածնի նախկին քաղաքապետին

08:13 • 12.01.16

«Գաղտնիք չէ, որ Էջմիածին քաղաքը իր սեփականությունը համարող ԵԿՄ նախագահ Մանվել Գրիգորյանը սովորություն ունի չհանդուրժել այն անձանց, ովքեր ըստ իրեն խախտում են իր իսկ կողմից գրված կանոնները՝ թեկուզ մեքենա կայանելով իր համար անցանկալի հատվածում:
«ՉԻ» տեղեկություններով՝ Ամանորի նախօրնին հերթական սկանդալային միջադեպն է տեղի ունեցել Էջմիածնում՝ Աժ գեներալ պատգամավորի անմիջական մասնակցությամբ:

Էջմիածինցիները ականատես են եղել, թե ինչպես է գեներալը ծեծի ենթարկում այս անգամ Էջմիածնի նախկին քաղաքապետ Հրաչիկ Աբգարյանին, որը «Ջիփ» մակնիշի ավտոմեքենան կայանել է Էջմիածնի սուպերմարկետներից մեկի մոտ, և դա էլ պատճառ է հանդիսացել որ գեներալ

Մանվելի թիկնապահները իջեցնեն մեքենայի անվադողերը՝ իմանալով հանդերձ, որ բռնցքամարտիկ Հրաչիկ Աբգարյանը չի հանդուրժի իր հանդեպ կատարվածը և իրենց հաշիվները տեղում «կմաքրի»: Սկսվում է ծեծկռտուքը, որին խառնվում է նաև իր մեքենայի մեջ սպասող գեներալ Գրիգորյանը: Աբգարյանի կնոջ ու հարսի աչքի առաջ գեներալն իր շքախմբով դաժան ծեծի է ենթարկում Աբգարյանին, իսկ ուժասպառ անելուց հետո ոտքերով հարվածներ տեղում նրա մարմնի տարբեր հատվածներին:

Գեներալի բիրտ գործողություններին չէր խանգարել անգամ այն փաստը, որ Հրաչիկ Աբգարյանը բոլորովին վերջերս կորցրել էր որդուն»,–գրում է թերթը:

Մանրամասները՝ թերթի այսօրվա համարում:
http://www.tert.am/am/news/2016/01/12/chi/1895442